ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/38215/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Ա. Շիլաջյանի

2024 թվականի դեկտեմբերի 6-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/38215/02/23 քաղաքացիական գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

ԱՁ Անուշ Էդվարդի Պետրոսյանի ներկայացուցիչը 16.11.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ կողմերի միջև 11.10.2023 թվականին կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) 02.02.2024 թվականի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է. « 1. Ա/Ձ Անուշ Էդվարդի Պետրոսյանի հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության և Ա/Ձ Անուշ Էդվարդի Պետրոսյանի միջև 11.10.2023 թվականին կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանալու պահանջի մասին, բավարարել՝

անվավեր ճանաչել 11.10.2023 թվականին կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ՍԵՐՎԵՐ/2023/Հ-70» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը:

2. ՀՀ ներքին գործերի նախարարությունից հօգուտ Ա/Ձ Անուշ Էդվարդի Պետրոսյանի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 06.12.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովումը պահպանել մինչև վճռի կատարումը: (...) »:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.04.2024 թվականի որոշմամբ ՀՀ ներքին գործերի նախարարության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի, որոշվել է. « (...) ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/38215/02/23 քաղաքացիական գործով 02.02.2024թ. վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերը բաշխելու հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով: (...) »:

Թիվ ԵԴ2/38215/02/23 քաղաքացիական գործը 02.12.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին, իսկ 03.12.2024 թվականին դատավորի աշխատակազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով:

Գործի նոր քննության ժամանակ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները պարտադիր են գործը քննող դատարանի համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ և 234.5-րդ, 414-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2025 թվականի հունվարի 23-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**